

«ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ԳՆԱԸ ԱՐ ԻՆՏԻ ԳԱՆ.» ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԼԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 2, 1903

ԹԻՒ 1

ԱՆԱԹՈՒԼԱ ԳՈՒԼԷՃ


Մարզուանի մեր փոքրիկ ընթերցողները կը ճանչնան այս պատկերը: Եթէ կը ճանչնան, ուրախ պիտի ըլլան զանիկա Տղայոց Աւետարանի Կոր Տարիին առաջին թիւին առաջին պատկերը ընդունու համար: Եթէ խարբերդի և Այնթապի Գոյէճներուն ալ ասոր հաւասար լաւ պատկերներն ունենայինք, զանոնք ալ կը դնէինք մեր թերթին մէջ: Թերեւս օր մը ձեռք պիտի բերենք զանոնք:

Պատկերին կեդրոնը գտնուած մեծ շէնքը Անաթոլիա Գոյէճն է, և պատկերին ձախ ծայրին մօտ ցած աշտարակով շէնքն է Աղջկանց դիշերօթիկ վարժարանը: Իսկ միւս շէնքերն են ուսուցիչներուն բնակարանը, հիւանդանոց մը, արհեստանոց մը, և մանչերու ու աղջիկներու որբանոցները: Մարզուան յարմար տեղ մըն է այս Հաստատութիւններուն համար, և քաղաքին վերի ծայրին վրայ ամէնէն պատուականն է անոնց դիրքը ջրը կրնային ունենալ:

Մարզուանի մէջ բացուած Ամերիկեան առաջին դպրոցն էր Աստուածաբանական վարժարանը, որ սկսաւ ասկէ 40 տարի առաջ: Գոյէճը հիմնուած չէր մինչև 1886, և անիկա փոքր սկզբնաւորութենէ մը մեծցած զարգացած է, և հիմա մեծ բարիք մը եղած է երկրին մէջ: Կայսերական հրովարտակը շնորհուեցաւ 1899ին, Անգետալ տարի ուսանողներուն թիւն էր 240, Հայ, Յոյն, և Աղջկանց դիշերօթիկ վարժարանին մէջ կը գտնուէին 200 աշակերտուհի: Կը կարծենք թէ այսչափ մըն ալ այս տարի կան:

Ամէն տղայ չկրնար Գոյէճ երթալ: Եւ շատեր որ չեն կրնար, աւելի օգտակար և արժանաւոր անձինք կ'ըլ-

լան քան գացողներէն շատեր: Բայց եթէ տղայ մը կամ աղջիկ մը սրամիտ է, աղէկ կ'ընէ եթէ Գոյէճի կրթութիւն առնելու աշխատի, պայմանաւոր Նախախնամութիւնը բանայ ճամբան: Մենք մեր մանկութեան ժամանակ քիչ կը մտածէինք Գոյէճ մտնելու մասին երբ կը նայէինք պատկերին վրայ այն Գոյէճին ուր մեր երէջք դատարարակուած էր, բայց մտանք:



Եւ չունինք տարակոյս թէ այս պատկերը դիտող մանուկներէն մէկքանին օր մը կրենք զիրենք պիտի գտնեն ուսանող եղած Մարզուանի Գոյէճին կամ Աղջկանց վարժարանին մէջ, թէ և հիմա չերազեն անգամ ասանկ բանի մը վրայ:

—○○○○—
«ՉԵՄ ԿՐՆԱՄ»

Խումբ մը տղաք պտրտելու ատեն կեցան չքեղ, մեծ դեղարանի մը առջև, և իրարու ձիւնագոնտակ կը նետէին: Դժբաղդաբար երբ անոնց ամենէն պզտիկը իր գնտակը նետեց ցուրտ օդին մէջէն, գնտակը գնաց զարկաւ ու ջախջախեց դեղագործին պատուհանի խոշոր ապակիներէն մէկը: Ապակիին փշուրելու ձայնը բոլոր այն տղաքը սարսափեցուց, մանաւանդ այն պզտիկը որ հիմա կայներ էր գոյնը

նետած և հաւուգողի մէջ, և խուլուած աչքերը տնկած կը նայէր իր գործած չարիքին վրայ: «Հիմա կը կատողի ձեր կիրակոսը: Փախիր, Եղուարդ, մենք մարդու չենք ըսեր, փախիր շուտով!» «Չեմ կրնար», ըսաւ պզտիկը հեալով: «Փախիր կ'ըսեմ քեզի, վախկոտ, ինչու չես փախիր: Կարծեմ ան պիտի չկրնար բռնել զիս:» «Ոչ, ես չեմ կրնար փախիլ», թո՛ղո՛ւ

վեց Եղուարդ: «Խենթ, հիմա պիտի բռնուիս: Ի՞նչ ապուշ տղայ ես եղեր, որ չես փախիլ: Ի՛հ, ես ըրի ամէն ինչ որ ձեռքես եկաւ:» մըմնջեց միւս աւելի մեծ տղան: Գուռը բացուեցաւ, բարկացած երես մը երեցաւ: «Ո՛վ ըրաւ ասիկա» ըսաւ խանութին տէրը խիստ ձայնով մը: «Ո՛վ ըրաւ, կ'ըսեմ», պոռաց մարդը երբ մէկը չպատասխանեց: Եղուարդ վախով ու դողով մօտեցաւ: Այն փոքրիկ, փափուկ դէմքով տղան բարկացուած մարդուն երեսը նայեցաւ, և պատասխանեց անկեղծ չեչուով մը: «Ես ըրի, տէր:» «Ի՛նչ դուն կը համարձակի՞ս ըսել ինձի ատիկա:» «Ես չեմ համարձակիր ուրանալ ըրածս, չեմ համարձակիր սուտ խօսիլ:» Այս պատասխանը անակնկալ էր: Այն խոժոռ, խիստ մարդը կանգ առաւ: տեսաւ տղին դեղ-

նած այտերը և ահաբեկ աչքերը, որոնց մէջ ճշմարտութեան և ճշմարիտ քաջութեան ոգին կ'արտափայլէր, և մարդուն սիրտը շարժեցաւ: «Եկուր հոս, տղաս, ի՞նչ է քու անունդ:» «Եղուարդ է, տէր: Ո՛հ, ի՞նչ կրնամ ընել ձեզ վճարելու համար: Ես պիտի ընեմ բան մը:» Տղին աչքերը արցունքով լեցուեցան: «Միայն սա կը խնդրեմ որ մօրմէս չպահանջէք վնասը վճարել:» «Կ'ուզե՞ս ճամբուս վրայի ձիւները թիով մաքրել յաջորդ ձիւնին ատենը:» Եղուարդի դէմքը փայլեցաւ և պատասխանեց, «Ամբողջ ձրմուռը, տէր: Ես պիտի մաքրեմ ամէն անգամ և աւելի ալ, տէր:» «Շատ աղէկ է: Եւ գիտե՞ս թէ ինչու քեզ այսպէս դիւրաւ թող կու տամ: Ինչու որ դուն ճշմարիտն ըսելու չվախցար: Ես կը սիրեմ միշտ ճշմարիտը խօսող տղան: Երբ նորէն ձիւնէ, անուշտ պիտի գաս ինձի:» «Այո, պիտի գամ, տէր:» «Մեք ամէն ալ պիտի օգնենք անոր:» պրօպագանդիստ տղաքը: Եւ երբ մէկ կողմ դարձան, երեք սրտագին կեցցէ՜ գոչեցին Պրն. Կիրակոսի համար, և երեք ալ այն տղին համար, որ չհամարձակեցաւ փախչիլ:



ՀՆԻԿԱՀԱՆԻ ՁԱԳԸ

«Տիկին Ուէլչ, հոս է ձեր փոքրիկ հնդկահաւը, և մեռած է», ըսաւ տխուր ձայնով մը քարոզչին տղան փոքրիկ Էտի, որ դրացի էր Տիկին Ուէլչի: Տղան ձագ հնդկահաւը ձեռքը կայնեցաւ դրան մէջ: «Ո՛հ, կը ցաւիմ», ըսաւ բարեսիրտ Տիկին Ուէլչ: Էտի տուն գնաց խռոված դէմքով: Իր ներսը բան մը կը չարչարէր զինք: «Իմ փոքրիկ մանչս ի՞նչ ունի», ըսաւ Էտիի մայրը, «բոլոր զուարթութիւնը գացեր է երեսէն:» Էտի խորունկ մը հառաչեց, յետոյ վեր նայեցաւ: «Ես հիմա ատոր վրայով ամէն բան պիտի պատմեմ, մայրիկ», ըսաւ: «Դուն գիտես Տիկին Ուէլչի սիրուն հաւու և հնդկահաւի ձագուկները: Անոնք այնչափ արթուն բաներ են, որ անոնց մէջէն ձագ հնդկահաւ մը ձեռքս առի և սիրելու ատեն քիչ մը սեղմեցի և մեռաւ: Չանկիկ Տիկին Ուէլչի տարի և ըսի թէ մեռած է, և — և բան մը կը չարչարէ զիս ճիշդ այս տեղս», և իր պղտորիկ ձեռքերը սրտին վրայ կոխեց: «Տիկին Ուէլչի պատմածը բոլորը այդ էր», հարցուց անոր մայրը ծանրութեամբ: «Այո», ըսաւ Էտի: Բայց քիչ մը ետքը տեսաւ մայրը որ Էտի դէպ ի Տիկին Ուէլչի դուռը կը վազէր: «Ե՛ս մեռցուցի ձեր հնդկահաւի ձագը, զանկիկ շատ սեղմեցով, կը հաճե՞ք ներել ինձի», ըսաւ փոքրիկ Էտի: Եւ Տիկին Ուէլչ պատաս-

խանեց, «Այո, սիրելիս: Գիտեմ թէ միտքդ զանկիկ սպաննել չէր:»

Երբ Էտի տուն եկաւ, զուարթութիւնը նորէն կը փայլէր դէմքին վրայ: «Ես ամբողջ ճշմարտութիւնը ըսի անոր, մայրիկ, և նեղութիւնս գնաց», ըսաւ ուրախութեամբ:

Էտի հիմա ինք քարոզիչ է, և իր փոքրիկ որդին ունի: Շատ հոգածութեամբ կը սորվեցնէ անոր, ինչպէս ինք սորված էր, ամբողջ ճշմարտութիւնն ըսել, որպէս զի անոր փոքրիկ սիրտը չարչարէ զանկիկ:



ԴՊՐՈՑԵՆ ՏՈՒՆ

Ի՞նչ երջանիկ կ'երևնայ այս տղան, Դպրոցին արձակումէն ետեւ տուն եկած է և հիմա կը բանայ իրենց տան բակին դուռը: Կարծեմ ունի քանի մը պատճառներ որոնք ամէնքը մէկանց ուրախութիւն և ժպիտ բերած են իր դէմքին վրայ:

Եթէ այս տղան ծուլութիւն ըրած ըլլար, և իր վարժապետը զինք յանդիմանած կամ պատժած ըլլար այդօրը իր դասերը սորված չըլլալուն համար, չեմ կարծեր որ այսպէս երջանիկ պիտի ըլլար: Եթէ կուտար ըլլար իր դպրոցի ընկերներուն հետ տան ճամբուն վրայ, կամ այնպիսի բան մը ըրած ըլլար, որու համար իր խիղճը անհանգիստ ընէր զինք, դէմքը խոժոռ և թթուած պիտի ըլլար փոխանակ ժպտուն ըլլալու:

Կամ եթէ չունենար սիրող մայր մը, կամ եղբայր կամ քոյր կամ ուրիշ ազգական մը տան մէջ, և ոչ մէկը որ ուրախութեամբ Բարի եկար ըսէր իրեն, և կամ եթէ վստահ չըլլար թէ

ճաշ մը պիտի գտնէր զոր հոգացած է հայրը և պատրաստած է մայրը, իր անօթեցած փոքր կշտացներու համար, այսքան ուրախ պիտի չըլլար: Այն տղան որ հաւատարիմ է իր ուսմանց մէջ, որ ուղիղ և ազնուարարոյ է իր խաղի ընկերներուն հետ վարմունքին մէջ, և կրնայ տուն երթալ և ըսել իր մօր թէ բարձր թիւ առաւ իր դասերուն մէջ, վասն զի կրցած էր պատասխանել իրեն ուղղուած ամէն մէկ հարցումին, և թէ խաղացած էր իր ընկերներուն հետ բայց չէր կուտար անոնց հետ, ահա ատիկա է երջանիկ տղան: Այդ տղան էք դուք:



ՀԱՆՔԱՀԱՆՆԵՐՈՒՆ ԱԼՊՈՄԸ

Աշտ և Մարիամ, երկու փոքրիկներ, նոր հասած էին հանքերու պղտորիկ քաղաք մը լեռներուն մէջ, իրենց առջև ունենալով երկար, երկար աւառ մը, և իրարմէ զատ ուրիշ խաղի ընկեր չունէին: Մայրիկին անգամ չէր կրնար օգնել անոնց, վասն զի հայրիկը հիւանդ էր, և մայրիկին բոլոր ժամանակը զանկիկ հոգալու կ'երթար, ուստի փոքրիկները, քոյր և եղբայր, շատ մինակ կը մնային:

Անոնք չուտով բարեկամացան կոշտ հանքահաններուն հետ, և արտօնութիւն ստացած էին իրենց ուղած կերպով խաղալ հանքերուն շուրջը: Զով և սիրուն էր այն տեղը, և շատ հաճելի էր խաղալ հանքին բերնին քովերը, և վայելել ներսի խոշոր հովահարներէն եկող զով հովը: Անոնք մանր գեղեցիկ քարեր և հանքածուխի փայլուն կտորներ կը ժողվէին աւաղին մէջէն: Ամբողջ ցերեկը ասդին անդին կը վազէին փոքրիկ կողովներով, որոնց մէջ կը հաւաքէին այս հետաքրքրական բաները: Վերջապէս լեցուեցան կողովները, և պղտորները նստան սիրուն, մաքուր աւաղին վրայ, հանգչելու և ուրիշ բան մը ընել մտածելու:

«Ես ըսեմ քեզի թէ ի՞նչ ընելու ենք», ըսաւ Մարիամ: «Այս աւաղը սեպենք հանքահաններուն ալպոմը, և բան մը գրենք անոնց համար որ կարդան:» Պղտորները հարթեցին աւաղը և գործի սկսան: Նախ իրենց մատերով խոռոչներ բացին դիրերու ձեւով, յետոյ խոռոչներուն մէջ քովեքով շարեցին իրենց հաւաքած փայլուն քարերը: Վերջապէս լմացաւ անիկա, և ահա արևու լոյսին մէջ կը փայլէր բան մը որ հանքահանները ժպտեցուց երբ անոնք կարդացին զանկիկ: «Մենք Զանկիկ կը յիշենք», վասն զի Աստուծոյ Մեծ Սիրտը:»

Հոն գտնուած ամէն հանքահան զանհիկա բոլոր օրը կարգաց շատ անգամ. և մինչև իսկ երբ լուսինը կ'ելլէր, հոն էր անհիկա նոյնքան պարզ ինչպէս միշտ, միայն թէ աւելի աղօտ լոյսի մէջ — վերջին բանը զոր հանքահանները կարգացին տուն վերադառնալէ առաջ: Բայց գիշերը անհիկա աւրուեցաւ լեռան կենդանիներէն, ուստի փոքրիկները յաջորդ օրը գրեցին, «Աստուծո՛ւ սէր է:» Եւ այս կերպով բոլոր ամառը նոր բնաբան մը գրուեցաւ ամէն անգամ որ հինը կ'աւրուէր:

Վերջապէս, երբ տղաքը տուն գացին, հանքահանները շատ կարօտցան սիրոյ այդ անոյշ պատգամը: Եւ որոշեցին մնալուն ալպոմ մը շինել յաջորդ տարուան համար: Յաջորդ ամառուան սկիզբը պզտիկները նորէն եկան, և այս անգամ հանքահանները գեղջկական շրջապատ մը շինեցին ալպոմին բոլորտիքը, և աւագին հետ առատ հող խառնեցին: Այնուհետև փոքրիկները գործի սկսան իրենց գլուխները շարժելով խորհրդաւոր բանի մը ձեռնարկելու պէս, և պզտիկ խոռոչներ բացին իրենց մատերով, և յետոյ մանր սերմեր ցանեցին առանց վրայ: Հանքահաններուն բոլոր հարցումներուն կը ժպտէին միայն, և «Սպասեցէք» կ'ըսէին: Այնուհետև ամառնային մեղմ անձրևէ մը և տաք արևու լոյսէն ետքը կամաց կամաց դուրս ցցուեցան փոքրիկ բոյսերը, և անհամբեր հանքահանները կարգացին կանաչ գիրերը, «Աստուծո՛ւ սէր է:»


Պզտիկները ծափահարեցին իրենց ուրախութենէն և նորէն ըսին, «Սպասեցէք, ինչու որ այս չէ ամէնը:» Եւ իրօք քանի մը շաբաթ ետև առաւօտ մը, նախորդ գիշերուան անձրևէն ետքը, հանքահանները օդին մէջ անուշահոտութիւն մը զգացին, և երբ գացին ալպոմը նայիլ, բոյսերը ծածկուած էին փափուկ ծաղիկներով, և օդը լեցուած էր անոնց անոյշ հոտովը:

Կարելի՞ էր աւելի անոյշ պատգամ մը հաղորդել աւելի անոյշ կերպով այն յոգնած հանքահաններուն: Եւ, որ լաւագոյնն է, այս անգամ անհիկա անոնց քով մնաց մինչև իսկ սառին գալէն ու ծաղիկներն սպաննելէն և պզտիկներուն տուն վերադառնալէն ետքը, հոն գտնուելու համար մինչև ու-

րիշ ամառ մը: Այո, եկող այն խիստ ցուրտ ձմեռուան մէջ սիրոյ այն անուշիկ պատգամը նորէն կը ծաղիկէր հանքահաններուն սիրտերուն մէջ, ուրկէ չէր կրնար կորսուիլ:

ՓԱՆԹԵՈՆ

Հոս կայ փարիզի մէկ մասին պատկերը, որ յայտնի կ'երևնայ թէ բարձրէն առնուած է, վասն զի վար կը նայինք տուններուն տանիքներուն վրայ: Ինչպէս եղաւ այս: Ստուերատուն մը, այսինքն լուսանկարիչի գործիք մը, կցուեցաւ թռուցիկի մը, և այնպէս կարգադրուեցաւ որ գեանին վրայ կայնող մարդ մը չուանի մը միջոցաւ գործիքին սսպնած և ապակին երևան հանէ և յետոյ ծածկէ: Պատկերը



առնուեցաւ 1,600 Մնգը. ոտք բարձրութենէ, որ իբր կէս հազարամետր է: Պատկերին առջևի զլխաւոր շէնքն է փանթէոնը, քաղաքին ամէնէն համաբաւոր շէնքերէն մէկը: Փանթէոնն է եկեղեցի մը զոր շինեց Գաղղիոյ կելովիս թագաւորը գրեթէ 1,400 տարի առաջ, և կը պարունակէ Ռուսոյի, Վոլթէրի և շատ ուրիշ համբաւաւոր մարդոց գերեզմանները:

ՄԱՐԿ՝ ՄԱՐԿՈՅ ՄԵՋ

Մօտերս անուղղակի կերպով հասկըցուեցաւ թէ Ամերիկեան Նախագահ Բուզէվէթը երբեք ծխախոտ գործածած չէ: Այն մարդը որ ազգի մը ճակատագրին պատասխանատուութեան մէկ մեծ մասը իր ուսերուն վրայ կը կրէ, և որ պաշտօն ունի ամէն ժամ իր ժողովրդով զբաղելու, այն մարդը որ իր գիրքին բերմամբ յարաբերութիւն կ'ունենայ օտար ազգերու ներկայացուցիչներուն հետ և ընկերական զանազան առնչութիւններու մէջ, երբեք հարկ տեսած չէ ծխախոտի դիմելու, բարի մարդ ըլլա-

լու կամ իր մտաւորական գործունէութիւնը սուրցնելու համար, և իր գործօն պաշտօնին խիստ զբաղեալ վիճակին մէջ այդ միջոցով իր ջիւղերը հանդարտեցնելու պէտք ունեցած չէ:

Ստիկա աւելի աչքի կը զարնէ երբ միտք բերենք թէ անհիկա անցեալին մէջ ատեն մը Միացեալ Նահանգաց Արևմտեան կողմի ագարակատուններու կոշտ կեանքը ապրած է, և իբրև զինուոր ծառայած է զինուորներու մէջ: Ոչ մէկ երիտասարդ կրնայ ըսել թէ Թէհէտոր Բուզէվէթ չէ մարդկային ազնիւ տիպար մը, կամ կատարեալ մարդ մարդոց մէջ, կամ թէ զուրկ է ընկերակցութեան ոգիէ: Կան երկու տասարդներ որոնք ծխախոտի գործածութիւնը մարդկութեան նշան կը համարին և կը կարծեն թէ անհիկա կ'օգնէ մարդուս ընկերական և ընկերներուն հաճելի ըլլալուն: Նախագահ Բուզէվէթի յաջողութիւնը պատուական դաս մը թող ըլլայ: Ահաւասիկ մարդ մը զոր միլիոնաւորներ կը նկատեն մտատիպար ազնուական իր անձով և կատարելութիւններով, որ կը մերժէ ծխախոտը ի սպառնդեալ հաս մէկը, որ կը յուսայ ծխախոտէ օգնութիւն գտնել իր գործերուն մէջ

և ընկերներուն մէջ գիրքի կողմանէ, ի զուր կը յուսայ: Հարկ չէ շատ մը փաստեր յառաջ բերել հաստատելու համար թէ ծխախոտը գերութեան լուծ մըն է զոր ոչ մէկ երիտասարդ կամ պատանի կրելու է իր վիզին վրայ: Իրողութիւնն է սա թէ ծխախոտ գործածողներու մէջ քիչեր կը գտնուին, եթէ կը գտնուին երբեք, որոնք իրենց որդին խրատեն ծխել: Այսպիսի բաներու մէջ փորձաւորութիւնը ամէնէն աղէկ ուսուցիչն է, և ծխողներուն մէջ հազիւ կրնայ գտնուիլ մէկը որ իր սրտին մէջ հազար անգամ խոստովանած չըլլայ թէ ծխելու սովորութիւնը գէթ անօգուտ է:

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՎԱՍԾԱԾ

Ամերիկայի մէջ Ֆիլատելֆիոյ կենդանաբանական Պարտէզն այցելողները անգամ մը զուարճացուց երկու փղղերու անհիմն սարսափը ուղեցուած փամփուշտներէ: «Գիտէք թէ փղղերը կը վախնան պզտիկ առարկաներէ», կ'ըսէ Կենդանաբանական Պարտէզի պահապանները:

րուն պետք: «Մնեցեալ Յուդիսին ամէն օր կէսօրէն ետքը լողանք ընել կու տայինք մեր փիղերուն: Օր մը հինգ վեց ուռեցուած փամփուշտներ (գալարուշա) նետեցինք լճակին մէջ երբ փիղերը հոն մտած էին լողալու համար: Առաջին անգամ փիղերը գրեթէ մահուազի սոսկացին փամփուշտներէն: Յետոյ անոնցմէ մին, որ իշխանուհի կը կոչուի, փամփուշտներէն մէկուն զարկաւ իր պատիճով (խորթում), և երբ անհկա վեր օդին մէջ ցատկեց, երկու փիղերն ալ լճակէն դուրս վազեցին: Շուտ ետքը համարձակեցան նորէն ետ դառնալ. և իշխանուհին՝ որ իր սեռին հետաքրքրութիւնն ունի և մտացի է, փամփուշտամբ ջրէն դուրս քաշեց փամփուշտներէն մէկը և իր ետևի ոտքերով կից զարկաւ անոր: Երբ ծանր հետևանք մը յառաջ չեկաւ, շարունակեց իր հետազոտութիւնները, որոնց վերջինն եղաւ երկու ոտքերը փամփուշտին վրայ դնել, փամփուշտը պայթեցաւ մեծ ձայնով և երկու փիղերը տուն վազեցին սարսափով:»




ՃԻՇԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Մեզմէ ոչ մէկը լիովին կը տեսնէ ճիշդ վայրկեանին ըսուած խօսքի մը բարեքը: Մանկամարդ կին մը երբ օր մը իր ըրկուան դէմ փողոցն է վար կ'իջնէր, ճիշդ իր առջև տեսաւ երեք երիտասարդներ, երիտասարդներէն երկուքը կը թուէր թէ բանի մը համոզել կը ջանային երրորդը, որ տղայ մըն էր, և տիկինը անոնց քովէն անցած միջոցին լսեց թէ երիտասարդներէն մէկը կ'ըսէր. «Ոհ, ներս եկուր և առաջ հատ մը խմէ, և վստահ եմ թէ պիտի գաս մեզի հետ»: Այդ մանկամարդ կինը, որուն սիրտը այդ պատճառաւ արագ արագ կը զարնէր, առանց վայրկեան մը անգամ յապաղելու յառաջ քալեց և իր ձեռնոցով ձեռքը տղուն բազկին վրայ դրաւ, և ըսաւ, «Ներեցէք համարձակութեանս, բայց մի երթաք անոնց հետ»: Տղան զարմանքով դարձաւ վայրկեան մը անոր նայեցաւ աչքը յառած, մինչև որ համոզուեցաւ թէ անհկա աղիւտ տիկին մըն է, յետոյ հանեց իր գլխարկը ակնածանքով և պատասխանեց, «Շնորհակալ եմ, պիտի չերթամ»: Եւ անմիջապէս բաժնուեցաւ իր ընկերներէն: Ասիկա եղաւ աւելի կարճ ժամանակի մէջ քան զոր կ'անցնի պատմութիւնը: Բազմութիւնը յառաջ կը շարժուէր, և տիկինը անխոստ եղաւ առաջ զանր մէջ: Տղան այլ ևս երեք չտեսաւ զանհկա նորէն, բայց տիկինը լաւ տեսնութիւնը պիտի տեսնէր: Այդ տղան, որ հիմա երիտասարդ մը եղած է, կ'ըսէ թէ տիկինը յորդորական ձայնը կը հնչէ իր ականջներուն երբ որ կը փորձուի այնպէս ինչպէս այն օրը, և թէ զինք կարողացուցած է իր անհաստատ ոտքերը դնել այն ժայռին վրայ ուր ապահովութիւն է ամէն փորձութեան դէմ:»

ՃԱՓՈՆՅԻ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌԻ ՏՂԱԲ

Ճափոնցի լրագրավաճառ տղաքը շատ գործ կը տեսնեն ներկայ պատերազմին սկիզբէն ի վեր: Ճափոնցիք շատ ընթերցասէր ժողովուրդ են և մեծ փափաքով կը կարդան թերթերը և ամբողջապէս ճափոններէն լրագրին առաւօտեան հրատարակութիւնը ընդհանրապէս խոշոր ծաւալ կ'ունենայ, և կը պարունակէ հեռագրաւուրներ, ծանուցումներ, ևն: Կէսօրէն ետև յաւելուածներ կը հրատարակուին քանի քանի անգամ, երբեմն մինչև կէսգիշեր: Յաւելուածները թուղթի պղտիկ կտորներու վրայ կը տպուին, և երբեմն քան կամ երեսուն բառէ աւելի չեն պարունակեր: Հետևեալ առաւօտ այս տպուածներուն մէջի լուրերը կը հաւաքուին, կ'ամփոփուին և կը ճշդուին: Որովհետև յաւելուածները միշտ վստահելի չեն, ճափոնցիք կ'ակնկալեն որ բացարձակ ճշմարտութիւնը պիտի գտնեն առաւօտեան թերթին մէջ: Բոլոր օրը մարդոց և տղոց բազմութիւն մը կը սպասէ լրագրատուններուն առջև, լրագրական յաւելուածները ընդունելու համար: Ամէն լրագրավաճառ կը կապէ իր մէջքը բամպակ կտաւէ գօտի մը, որուն վրայ շարուած են մանր զանգակներ: Հաղիւ թէ լրագրավաճառը կը ստանայ թերթերը, ճամբայ կ'իջէ, կը սկսի վազել փողոցն ի վար, և զանգակներուն աղմկալի ձայնէն ժողովուրդը կը հասկնայ թէ յաւելուած կը ծախուի, և դուրս կը վազէ պատերազմական լուրերը գնելու: Թերթերը հինգ ըինէ (իբր երկու քուրկէս փարա) մինչև հինգ սէն (իբր քսանըհինգ փարա) կը ծախուին: Այս զանգակներուն շնորհիւ, լրագրավաճառ տղոց հարկ չէ փողոցները պտուալ թերթ ծախելու համար:»



Իր ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԱՄՈՒ Գիշեր մը Ովկիանոսի շողեմաւի մը հնոցպանը մթութեան մէջ պտտելու ատեն ծակէ մը վար ինկաւ և կտրեցաւ սրունքը և ուրիշ վէրքեր ալ ընդունեց: Մնոր աղաղակէն նաւին գործաւորներէն խուսք մը օգնութեան վազեցին, և շատ դրժուած կը մտածէին թէ ինչ ընելու էին. և ահա մարդը խօսելու կը ջանար: «Հանդարտ կեցէք, տղաք,» ըսաւ անոնցմէ մէկը, «կարելի է անհկա լուր մը պիտի զրկէ իր տունը:» Բայց խեղճ մարդը իր տան վրայ չէր մտածեր, մինչև անգամ տառապեցուցիչ ցալի այդ վայրկեանին, «Բէտք հինգերորդ մեքենավարին որ կաթնային նայի,» շնչեց:

ՆՈՅՆՄԱՐԻ ԶԱՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Յ	ա	ն	է	Ս
Բ	Ո	Վ	Ք	Է
Կ	Փ	Ա	Մ	Ի
Ա	Ս	Բ	Է	Ք
Ն	Օ	Թ	Ի	Փ
Ա	Մ	Ն	Ն	
Մ	Բ	Է	Ա	

Լուծեցին, Ստան. — Նեփթաղիմ 8. Թոթոսեան, Մարտիկ. — Միհրան 8. Կարապետեան, Խոփերք. — Վ. Կամարյան Ս. Ներսիսեան, Անտի. — Վարդան Վարդերեսեան:

ԶԱՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԵՆ

0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0

1. Երկու նոյն դիրքեր: 2. Մարգարէ մը: 3. Բարեկոնի շուրջ երկու մը: 4. Նախորդ տեղը այն քեանին որուն վրայ կառուցուեցաւ Սողոմոնեան Տաճարը: 5. Գրամ մը: 6. Հովիտ մը ուր Յուդայի մէկ թագաւորը յաղթեց: 7. Մեքէ մը: 8. Իսրայէլի թագաւորներէն մէկը: 9. Նշանաւոր թագաւոր մը (ծայրէն քանի մը դիրքը գեղջուած): 10. Չրոնեան տեղերը գրաւող գիւրգիւն մէջէն ետքը շեղակի շարուած գիւրգիւն աշակողմէն դէպ ի վար կը կարգացուին ուխտաւորի մը անունը: 11. Շեղակի շարուած միւս ետքը գիւրգիւն աշակողմէն դէպ ի վեր կը կարգացուին անոր պաշտօնը, Վերը երկու կարգի վրայ շեղակի շարուած գիւրգիւն աշակողմի երեք վարէն վեր կը կարգացուին նոյն որդիներէն մին, իսկ ձախակողմի երեքը վերէն վար կը կարգացուին չափի մը անունը:

Խարերդ ԼՈՒՅՍԵՐ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Տարեկան բաժնորդագին՝ 6 դր. արծաթ, կանխիկ, ամէն տեղւոյ համար:

Ամբիկայի Մեխանիկայի Ընկերութեան կողմէն Արտօնատէր Ծ. Բ. ԿԻՒՆ ՏՆՕՐԷՆ—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՏ
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՆՈՒ ԳՈՅԱՅԱՆ
Ֆինանսըւր Եղուշու: Ամբիկայի Խան